



Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն Ամիո ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964
Ֆ. +374 10 260 961

Grant Thornton Amyot LLC
8/1 Vagharshtyan Str.
0012 Yerevan, Armenia

T +374 10 260 964
F +374 10 260 961

www.gta.am

«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ բաժնետերերին,

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

*Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության
պատասխանատվությունը*

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության ներդրումային ընկերությունների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության համապատասխան պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի մշակումը, կիրառումը և պահպանումը, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի հիման վրա եզրակացություն արտահայտել սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Հայաստանի Հանրապետության Աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացումը: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացությունն արտահայտելու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ընկերությունների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

Գագիկ Գյուլբուդադյան
Տնօրեն/բաժնետեր

Արեն Աղաջանյան
Աուդիտոր

25 մարտի, 2010թ.
ք. Երևան

